

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԱՇՏՈՑԻ ԴԵՐԸ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՄ

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԷՅԹԻԽԱՆԵԱՆ
PARANDZEM9524@GMAIL.COM

Սուրբ Գրքի հայերեն առաջին թարգմանությունը նոր դարագլուխ է բացում հայ գրական մշակույթի պատմության մէջ, եւ այդ դարագլուխը համարում է **նսկեդարեան**: Հայ իրականության մէջ ոչ մի դարաշրջան չունեցաւ հայերէնի այն դասական վիճակը, որ յատուկ էր Ե. դարի հայերէնին՝ թարգմանական ու մատենագիտական առատութեամբ¹:

Հայագիտության մէջ սովորաբար նշում է, որ գրերի գիտից յետոյ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի առաջին գործը լինում է *Աստուածաշնչի* հայերէն թարգմանութիւնը: Իսկ ըստ մեր պատմիչների՝ *Սուրբ Գրքի* հայերէն բանաւոր թարգմանութիւնն արդէն սկսուել էր դեռ մինչեւ գրերի գիտը²: Չմոռանանք, որ 301ին Հայաստանն ընդունում է քրիստոնէութիւնն իբրեւ պետական կրօն, եւ Գրիգոր Լուսաւորիչը դառնում է *Սուրբ Գրքի* առաջին, այսպէս ասած, բանաւոր թարգմանիչը՝ սկիզբ դնելով սուրբգրային բնագրերի թարգմանության բանաւոր շրջանին:

Աշտիշատի ժողովից յետոյ (353-356) Հայաստանում դպրոցներ բացուեցին՝ յունարէն եւ ասորերէն լեզուներ ուսուցանելու, եւ դրա հիմնական նպատակը, անշուշտ, *Սուրբ Գիրքը* ժողովրդի մէջ հայերէն թարգմանաբար քարոզելն էր³:

Խորենացին գրում է, որ Մեսրոպը եկեղեցում (կարեւորենք՝ դեռ մինչեւ գրերի գիտը) նախ կարդում էր գրքերը ասորերէն լեզուով, ապա թարգմանում էր հայերէն, ուստի նրան ամէն տեղ հասկանում էին եւ գնահատում, մինչդեռ նրա բացակայությամբ կարդացուածը չէր թարգմանւում, եւ ոչ ոք ոչինչ չէր հասկանում⁴: Գողթան գաւառում հեթանոսներին դարձի բերելիս Մաշտոցը առաւել քան համոզւում է, որ պարտադրանքով չի կարելի ժողովրդին քրիստոնեայ դարձնել. մարդիկ Աստծու խօսքը պէտք է նախ հասկանան, որպէսզի ընդունեն: Լէօն գրում է. «Այնպէս, որ դարերի ընթացքում ժողովուրդը բերանացի գրականութիւն էր պահպանում բամբիռների ձայնակցութեամբ, նոյն այդ հողի վրայ, նոյն այդ ձայների մէջ պարզուեց, անհրաժեշտութիւն դարձաւ տառեր գրնելու, գրով գրականութիւն ստեղծելու միտքը»⁵: Մարդկանց

պէտք է ուսուցանել: Իսկ դրա համար նախելառաջ սեփական գիր էր հարկաւոր:

Այնքան սպասուած հայոց գիրն ստեղծում է, եւ Կորինի իսկ վկայութեամբ՝ Սահակը եւ Մեսրոպը աշակերտների հետ անմիջապէս սկսում են թարգմանել Ս. Գիրքը. «Այն ժամանակ անպայման սքանչելի դարձաւ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հաւասարակիցների ձեռքով յանկարծ, մի անգամից եկան հասան, հայաբարբառ, հայերէնախօս դարձան **օրէնուսոյց Մովսէսը՝ մարգարէական դասի հեղ, եւ առաջադէմ Պօղոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցոյց Աւետարանի հեղ միասին**»⁶ (ընդգծումը մերն է - Փ.Մ.): Բայց մինչեւ այս խօսքերը գրելը նոյն ինքը՝ Կորինը գրում է, որ Մաշտոցը նշանագրերը ստեղծելուց եւ Հռոփանոսի մօտ գեղագրելուց անմիջապէս յետոյ հենց Սամոսատում «...ձեռնարկեց թարգմանութիւն անելու երկու մարդու, իր աշակերտների հեղ, որոնց առաջինի անունը Յովհան էր, եկեղեաց գաւառից, եւ երկրորդինը՝ Յովսէփ, Պաղանական տնից: **Եւ սկսեց թարգմանել (Սուրբ) գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից...** (ընդգծումը մերն է - Փ.Մ.):»⁷: Որ Մաշտոցի երկու աշակերտներն էլ հմուտ, աւագ դասի թարգմանիչներ են եղել, հաւաստում եւ ընդունում են բոլորը: Ուրեմն ինչո՞ւ հնարաւոր չէր, որ երեք նշանաւոր թարգմանիչներ Սամոսատում եղած ժամանակ կարող էին թարգմանել ոչ միայն Սողոմոնի առակները, այլեւ ողջ *Հին Կտակարանը* (յիշենք՝ Մաշտոցը դեռ մինչեւ գրերի գիտը բանաւոր թարգմանում էր *Սուրբ Գիրքը*): Շարունակենք եւ մէջքերենք Խորենացուն՝ Մաշտոցի դեռեւս դրսում ծաւալած գործունէութեան մասին. «Եւ իսկոյն ձեռնարկեցին թարգմանութեան, խորհրդաբար **սկսելով (Սողոմոնի) Առակներից, ամբողջ քսաներկու յայտնի գրքերը եւ Նոր կտակարանը փոխադրում է հայերէն լեզէ** Պաղնացին...»⁸:

Այս կարծիքները մերժում են Ստեփանոս Մալխասեանցը եւ Հրաչեայ Աճառեանը: Առաջինը նշում է, որ հնարաւոր չէր հենց Ասորիքում թարգմանել երկու գիրքն էլ՝ թէ՛ *Հինը*, թէ՛ *Նորը*, այս տողերը համարում է լուսանցագրութիւն, որ յետոյ մտել է բնագրի մէջ: Հերքելով Խորենացու այս խօսքերի հաւաստիութիւնը՝ Մալխասեանցը յենում է Խորենացու միւս խօսքերի վրա (Գ, ԾԴ), ուր նշում է, թէ *Ս. Գիրքը* թարգմանեց Սահակը ասորերէնից յունարէնը չլինելու պատճառով, եւ այնուհետեւ (Գ, ԿԱ) Սահակը եւ Մեսրոպը յունարէնից թարգմանեցին մի անգամ թարգմանածը: Սակայն Խորենացու խօսքերը կասկածի տակ առնող Մալխասեանցը Փաւստոս Բուզանդի պատմութեան առաջաբանում Խորենացու մասին գրում է հետեւեալը. «Խորենացին իսկական մտածող հեղինակ է. նրա ամէն մի խօսքը չափուած է, կշռուած, ո՛չ աւելորդ խօսք, ո՛չ չափազանցութիւն: Նա յիշում է, ինչ որ ասել է մի անձի կամ դիպուածի

մասին եւ ոչ մի անգամ չի ընկնում հակասութեան մէջ»⁹: Ուրեմն որքանո՞վ է ընդունելի Մալխասեանցի այս հակասական մօտեցումը¹⁰:

Իսկ Աճառեանն էլ նշում է, որ եթէ հաւաստի համարենք Խորենացու եւ Փոքր Կորինթի խօսքերը, ապա ուրեմն պիտի ընդունենք, թէ Ս. Գիրքը հայերէն է թարգմանուել երեք անգամ. առաջինը՝ Մեսրոպի ձեռքով Սամոսատում, երկրորդը՝ Սահակի ձեռքով Մեսրոպի՝ Աղուանք քարոզութեան գնացած ժամանակ եւ երրորդ՝ թարգմանիչների վերադարձին՝ Եզնիկի ընկերակցութեամբ¹¹:

Սուրբ Գրքի թարգմանութեանն է անդրադարձել նաեւ Ղազար Փարպեցին, ըստ որի՝ թարգմանութիւնը կատարուել է յունարէն բնագրից, եւ եղել է ընդամէնը մէկ թարգմանութիւն, եւ որ դրա հեղինակը բացառապէս Սահակ Պարթեւն է: Մենք այս տեսակէտը չենք քննարկի, քանզի դրա լաւագոյն պատասխանը տուել է հենց ինքը՝ Աճառեանը. «Փարպեցին մեսրոպեան գրերի գիտն էլ ուզում է Սահակին ընծայել... որի բուն նպատակն է անհամեմատ բարձրացնել Սահակի արժանիքը, մինչեւ իսկ ի վնաս Մեսրոպի»¹²: Լիովին համակարծիք լինելով Աճառեանի տեսակէտին՝ ցանկանում ենք մէջբերել Ղազար Փարպեցու՝ Ժ. գլխում գրածը. «Եւ ասորերէն լեզուն չհասկանալուց եկեղեցական պաշտօնեաների աշխատանքն ու ժողովրդի ջանքերն ապարդիւն էին դառնում: Եւ երանելի այր Մաշտոցն այս մասին երկար խորհում էր ու լալիս էր իր ներսում. չէ՞ որ կային հայերէն լեզուի նշանագրեր, **որոնցով հնարաւոր էր սեփական ձայնով եւ ոչ թէ մուրացածոյ լեզուով, եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց եւ առհասարակ ամբողջ բազմութեան սրտերը** (ընդգծումը մերն է - Փ.Մ.)»¹³: Արդեօք այս խօսքերը ուղղակիօրէն ցոյց չեն տալիս, որ Սուրբ Գրքի թարգմանութեամբ նախանձախնդիր էր նախ եւ առաջ Մեսրոպը:

Էմմանուէլ Պիազեանը Կորինթի երկի աշխատասիրութեան մէջ գրում է. «Մինչ այդ՝ հայերէն լեզուով մի բառ անգամ չկար մատեանների մէջ գրուած, նոյնիսկ օտար լեզուների տառերով, հիմա Մաշտոցը բերում էր յաջողութեամբ յօրինած հայերէն նշանագրեր եւ հայերէն թարգմանուած ու գրուած **Աստուածաշնչի մի գիրքը (գուցէ եւ մի քանի գրքեր)** (ընդգծումը մերն է - Փ.Մ.)»¹⁴:

Նշուած փաստերը մեզ բերում են այն համոզման, որ Մաշտոցն իր աշակերտների հետ յատկապէս Սամոսատում եղած ժամանակ (իսկ դա գրեթէ մէկ տարի է) թէ՛ Հին, թէ՛ Նոր կտակարաններից բաւական թարգմանութիւններ է կատարում եւ նոր միայն վերադառնում Հայաստան: Պայմանականօրէն սա համարենք առաջին՝ **Սամոսատեան թարգմանութիւն**: Վերադառնալով՝ նա դեռ Սահակին եւ միւսներին պէտք է ներկայացնէր հայերէն տառերը, իսկ դրա համար ժամանակ էր պէտք, հակառակ դէպքում պիտի մտածենք, որ Սահակն անկախ Մաշտոցից արդէն ոչ միայն գիտէր հայերէն գրել, այլեւ այնքան վարժ էր, որ կարող էր

միաժամանակ թարգմանել *Աստուածաշունչը*: Ո՞ւմ համար էր դա հեշտ կատարել. Մեսրոպի՞ համար, որը բերանացի գիտեր ողջ *Սուրբ Գրքը* եւ տասնամեակից ավելի բանաւոր թարգմանում էր եւ քարոզում, որը Դանիէլեան նշանագրերով երկու տարի (կամ երկու ամիս) աշխատել էր, եւ որ վերջապէս ինքն էր ստեղծել հայերէնի հնչիւնական համակարգը ճիշտ ներկայացնող գրային համակարգը, թէ՛ Սահակի, որը պէտք է մի կողմ թողնէր իր կաթողիկոսական ծանր ու պատասխանատու գործը, հոգեւոր առաջնորդի իր պարտականութիւնները, մի կողմից՝ սովորէր հայերէն գրել, միւս կողմից՝ թարգմանէր *Սուրբ Գրքը*:

Մենք հակուած ենք հետեւեալ վարկածին. Մաշտոցը հայրենիք է վերադառնում հայ գրերով եւ *Սուրբ Գրքից* կատարած որոշակի թարգմանութիւններով (հիմնականում *Հին Կտակարանից*, մասամբ՝ *Նոր*): Այդ թարգմանութիւնը անուանենք **Սամոսատեան**: Եւ արդէն հայրենիքում ստեղծում է թարգմանիչների մի խումբ՝ անպայմանօրէն Յովհաննի եւ Յովսէփի մասնակցութեամբ (նրանք արդէն փորձառու թարգմանիչներ էին), որոնք Սահակ Պարթեւի հովանու ներքոյ արագօրէն սկսում են ամբողջացնել, լրացնել, խմբագրել Մեսրոպի՝ իրենց յանձնած թարգմանութիւնները՝ ստեղծելով մի բնագիր, որ պատմութեան մէջ մտել է **փութանակի թարգմանութիւն** անուամբ՝ «*գլառաջագոյն գլանկարծագիւր գփութանակի գթարգմանութիւն*»¹⁵: Պայմանականօրէն սա համարենք **երկրորդ՝ Սահակ-Մեսրոպեան** թարգմանութիւն:

Բայց դրանով *Աստուածաշնչի* թարգմանութիւնը չի ավարտում, այն շարունակաբար լրացւում է, համեմատւում թէ՛ յունարէն, թէ՛ ասորերէն տարբեր բնագրերի հետ: Այդ գործընթացը նոր որակ է ձեռք բերում Եփեսոսի կրօնական ժողովից յետոյ, երբ Հայաստան է բերւում *Սուրբ Գրքի* կանոնական, ընդունելի թարգմանութիւն, որը, հաւանաբար, եղել է վերը յիշատակած Որոգինէսի կամ Կեսարեան *Աստուածաշնչի* մի օրինակ¹⁶: Սա արդէն *Սուրբ Գրքի երրորդ* թարգմանութիւնն է:

Սուրբ Գրքի թարգմանութիւնը որեւէ որոշակի թուականի հետ կապելը ճիշտ չէ. *Աստուածաշնչի* թարգմանութիւնը անպայմանօրէն պէտք է դիտարկել իբրեւ մի գործընթաց, որն սկսուել է դեռ մինչեւ գրերի գիտը:

Տեղին է ուղղակի մէջբերել Վարագ Առաքելեանի հետեւեալ դիտարկումը. «*Աստուածաշնչի թարգմանութիւնը V դարի սկզբում միանգամից չէր կարող գլուխ բերուել, առնուազն 10-ից 15 տարի էր հարկաւոր, որպէսզի մեր դեռեւս մեծ փորձ չունեցող թարգմանիչները (ընդգծումը մերն է – Փ.Մ.) այն ժամանակուայ դժուարին պայմաններում կարողանային այդ հսկայ գրքի հայացումը գլուխ բերել*»¹⁷:

Այսպիսով՝ *Սուրբ Գրքի* գրաբար թարգմանութիւնը ներառում է երեք տարբեր վիճակներ՝

ա) **Սամոսատեան** կամ **Մեսրոպեան**,

բ) **Փութանակի** կամ **Սահակ-Մեսրոպեան**,

գ) **Սահակ-Մեսրոպեան**:

Ցաւօք, մենք չունենք **Մեսրոպեան** այն թարգմանութիւնը, որը կատարուել է դրսում՝ Սամոսատում, որը շատ հարցերի պատասխան կը տար: Այդ տարբերակն է դարձել հիմք յետագայ թարգմանութիւնների համար, եւ այսօր արդէն հնարաւոր չէ մեզ հասած անգամ լաւագոյն համարուող ձեռագրերի մէջ տարանջատել նախնականը յետագայ մշակումներից: Անշուշտ, **Մեսրոպեան** կամ նախնական թարգմանութեան մէջ դարձեալ կը լինէին բազմաթիւ տարընթերցումներ ու հակասութիւններ, որոնք արդէն պայմանաւորուած կը լինէին եբրայերէն, ասորերէն կամ յունարէն բնագրերով եւ ոչ թէ մեր թարգմանիչների կամ ձեռագիր ընդօրինակողների աշխատանքով: Ասել է թէ՛ այս երեք բաժանումները լայն առումով արտայայտում են *Սուրբ Գրքի* հայերէն թարգմանութեան անցած ուղին, իսկ նեղ առումով այս երեքը մեկտեղուած դարերի հեռաւորութիւնից մեզ ներկայանում են իբրեւ հայերէն *Աստուածաշնչի* մէկ ամբողջական՝ **Սահակ-Մեսրոպեան ոսկեղենիկ թարգմանութիւն**, որն էլ յետագայում մեր գրիչների համար դարձել է ընդօրինակման նմուշ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Հ. Հիւբման, *Հայերէնի Քերականութիւն*, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 2003, էջ VIII:

² Կորիւն, *Վարք Մաշտոցի*, աշխ.՝ Մ. Աբեղեան, Երեւան, 1962, էջ 106. նաեւ՝ Մովսէս Խորենացի, *Հայոց Պատմութիւն*, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1980, ԽԷ, էջ 285:

³ Խորենացի, նոյն:

⁴ Խորենացի, ԽԷ., էջ 285:

⁵ Լէօ, Ս. *Մեսրոպ*, Թիֆլիս, 1904, էջ 158-159:

⁶ Կորիւն, էջ 106:

⁷ Կորիւն, էջ 102:

⁸ Խորենացի, ԾԳ., էջ 292:

⁹ Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1968, էջ 54:

¹⁰ Մալխասեանցի տեսակէտը մերժում է նաեւ Շահէ Արք. Աճէմեանը (Շահէ Արք. Աճէմեան, *Հայերէն Աստուածաշունչը (Հայագիտական Ուսումնասիրութիւններ)*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2006, էջ 35:

¹¹ Հրաչեայ Աճառեան, *Հայոց Գրերը*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1984, էջ 311:

¹² Նոյն, էջ 244:

¹³ Ղազար Փարպեցի, *Հայոց Պատմութիւն*, աշխատ.՝ Բ. Ոլոյբաբեան, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., Դր. Ա, Ժ, էջ 31, Երեւան, 1982:

-
- ¹⁴ Կորին, Վարք Մաշտոցի, աշխ.՝ Է. Պիազեան, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1981, էջ 37:
- ¹⁵ Կորին, Վարք Մաշտոցի, աշխ.՝ Ա Մաթեոսեան, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1994, էջ 100:
- ¹⁶ Ներսես Ա. Քինյ. Ներսէսեան, Աստուածաշունչը Եւ Հայ Մշակոյթը, Երեւան, Հրատ. Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն, Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն, 2001, էջ 18-19:
- ¹⁷ Վ. Առաքելեան, Հինգերորդ Դարի Հայ Թարգմանական Գրականութեան Լեզուն Եւ Ոճը, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ, Հրատ., 1984, էջ 6:

THE TRANSLATION OF THE BIBLE AND MESROP MASHTOTS' ROLE
(Summary)

PARANDZEM MEYTIKHANIAN
PARANDZEM9524@GMAIL.COM

The article focuses on the translation of the Holy Bible into Armenian after the invention of the Armenian alphabet.

The author notes that the Bible had three translations. The first two were partial and hastily conducted translations, while the third one was completed after 433 AD and was designated "Sahak-Mesrop's original *Vosgeghenik*."